№ 44 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1894 № 44

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի: Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիանց, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ **„ՇԱՒԻՂ“** ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

„Շաւիղը“ կը հրատարակուի Թէհրանում (մօտաւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։ „Շաւիղի“ բաժանորդագինն է մէկ թուման, կէս տարուանը վեց ղրան։ Արտասահմանում 3 ռուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 ռուբլի կամ 4 ֆրանկ։

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետևեալ հասցէով. Téhéran Rédaction „CHAVIGH“.

Դավրէժում ցանկացողները կարող են դրուել Բաղդասար Մելիք Սարգսեանցի մօտ, Սալմաստում Յովհաննէս Ապրէսեանցի մօտ, արտաքիլում՝ Յակոբ Էլչիբեկեանի մօտ, Նոր-Զուղայում Յովսէփ Բարսեղեանցի մօտ, Բուշիրում՝ պ. Կ. Զէյթունեանի մօտ, Մարաղայում՝ Մելքոն Խալափեանի մօտ Ռաշտում՝ Ալէքսան Յովսէփեանցի մօտ:

Ասլառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կուսակցութիւն թէ անձնական հաշիւներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Դավրէժից. Թէհրանի օր. դպրոցի մասին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի Տեսութիւն. Արտաքին լուրեր.—ՖԵԼԻԵՏՕՆ.

Կուսակցութիւն թէ անձնական հաշիւներ:

I.

Զը նայելով որ Էջմիածնից եկած մի վարդապետ կարծեց հաշուութիւն ձգել Թէհրանի Հայ հասարակութեան երկու „կուսակցութիւն“ կոչւող մասերի մէջ, այնուամենայնիւ այս բոպէիս իսկ նրանք աւելի քան երբէք կատաղաբար իրարու թշնամանում են եւ աւելի մեծ ջանքով են շարունակում հասարակական ոյժերի ջլատման գործը։ Այդ պառակտում ձգող տնձերի խումբերը իրանց անմիտ զօրապետներով յանդգնութիւնը, այն աստիճանի են հասցրել, որ ծիծաղելի սնապարծութեամբ իրանք իրանց անուանում են „կուսակցութիւններ“ առանց ըմբռնել կարողանալու, որ Կիրակոսի եւ Փիլիպոսի միմիանց հայհոյելու, միմիանց վերայ ցեխ շպրտելու... գործը երբէք չէ կարող կոչուիլ կուսակցական վարմունք։

Կուսակցութիւն լինում է գաղափարների համար. նրա վիճաբանութիւնը, նոյն իսկ կռիւների նիւթը ոչ այս ինչ աղալի գործի գլուխ լինելն է եւ ոչ էլ այն ինչ պարոնի ամեն բանի վերայ իշխելու ախտը։ Կուսակցութեան անդամները եթէ միմեանց անուանում են կամ յետադէմ—խաւարամիտ, պահպանողական եւ ազատամիտ եւն. ոչ թէ նրա համար որ մի քանի նախապատմական չինացիներ չեն կամենում մի մեռածի կուռք դարձնել եւ նրա վերայ դրուած պսակը Աստուծոյ սեղանի շուրջը կախել, այլ նրա համար, որ այս ինչ կամ այն ինչ պրինցիպը—իրանց կարծիքով—վնասում է կամ օգուտ տալիս հասարակութեան, արգելք լինում կամ զարկ տալիս յառաջադիմութեան։ Եթէ կուսակցութիւնները Եւրոպայում կամ Կովկասում կատաղի կռիւ (բայց ազնիւ կռիւ) են մղում միմեանց դէմ, այդ ոչ թէ նրա համար է, որ մի որոշ խումբ չէ կամենում արխիւային մի մանկավարժի ուսումնարան թոյլ

ՖԵԼԻԵՏՕՆ

Ֆելիետօնիստի մուզան:—Մուզայի պատկերը:—Միմիանց միս կրծելը, որպէս չափազանց սիրոյ նշան:— Թէ ինչպէս կարելի է բաղդացնել Թէհրանի գրադարանների Միւր:— Ինչպէս պէտք է բացատրել Թէհրանցւոց նորատեցութիւնը:—Որն է ծեռնտու. փող նուիրելով ազդասէր դառնալ, թէ գիրք:—Թարգմանիչների օրհասը:—Որն է գերադասելի—շնագիրը թէ թարգմանութիւնը:—

—

—Շատ կուզէի տեսնել Ֆելիետօնիստի մուզային, ասաց մի օր բարեկամս:

—Ինչպէս ես այնքան էլ մօտ յարաբերութեան մէջ չեմ գտնուում նորա հետ, պատասխանեցի ես, սակայն եթէ նկարիչ լինէի, մօտաւոր դաղափար տալու համար՝ կը նկարէի քեզ նորա պատկերը:

—Բայց ինչպէս կուզէիր նկարած լինել նորա պատկերը, հետաքրքրուեց բարեկամս:

Բանաստեղծները իրանց Մուզային ներկայացնումեն իբրեւ մի եթերային էակ, որ սաւառնում է երկնային բարձրութիւններում եւ իւր նուրբ մատներով հնչեցնելով ոսկեայ՝ քնարը, տեղափոխում է իւր երկրպագուներին ցնորքների աշխարհը: Ես կը տայի Ֆելիետօնիստի Մուզային ընդհակառակն մի շատ կոշտ մարմին, զօրեղ ձեռքերով եւ զօրեղ ոտքերով, կը զրահաւորէի նրան ոտից ցկլուխ ամուր պողպատեայ զրահներով, կը կանգնեցնէի նրան հաստատ հողի վերայ, մի ձեռքը կը տայի մի ահագին մտրակ, միւսում մի սուր բիզ, իսկ բերանը մի սեղադոչ շվփոր.պատկերի մի կողմը կը նկարէի մի էշ, որին Մուզան բզելիս լինէր իւր սուր բիզով եւ որի վզից կախած լինէր մի տախտակ վրան խոշոր տառերով գրած «ազգային գործեր»:

Պատկերի միւս կողմում կը նկարէի Թէհրանի ազգային գրադարան—ընթերցարանները եւ Թատրոնը՝ հաստ փոշէ վերմակը գլխներին քաշած քաղցրը քնի մէջ խորմփացնելիս, իսկ Մուզան բերնի ահագին փողը ուղղակի նրանց ականջների դէմ արած՝ փչելիս:

Պատկերի երրորդ անկիւնում կը նկարէի մի ամբողջ բանակ „ազգասիրաբար“ իրար միս կրծող ազգայնների, մի այդքան էլ սեւազլուխներ, փողի պարկ—հաստափոր աղաներ, աղուիսանման երկոտանիներ, որոնք բոլորն էլ կռացած Մուզայի մտրակի հարուածների տակ, մի ձեռքով մտրակի դնդած տեղերը բռնէին, միւսով աշխատէին ցեխ շպրտել դէպի իրանց հալածողը, որը սակայն անողորմ կերպով շարունակէր մտրակելը, առանց ուշադրութիւն անգամ դարձնելու նրանց տմարդի ընդդիմադրութեան վերայ:

Բարեկամս գոհ մնալով ինձանից, առաջարկեց մի քանի հարցեր լուծելու:

Ա. Հայց.—Ինչպէս պէտք է բացատրել այն տխուր երեւոյթը, որ Թէհրանի մեր ազգայինք այդքան եռանդուն կերպով զբաղուած են իրար միս կրծելով:

Պատասխան.—Ինչպէս գիտենք, Թէհրանի Հայ հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող „կուսակցութիւնները“ ոչ մի ինչ չեն, եթէ ոչ մի քանի հոգի, որոնք ամենայն ինչ կարող են անել, միայն թէ իրանց անունը հանրութեան մէջ գրաւեն, ինչպէս ասենք՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներում Ֆիլիպինեանները, Ֆրանսիայում Բոնապարտիստները, Գերմանիայում Սոցիալիստները, Ռուսիայում Նիհիլիստները եւ այլն: Ինչպէս գիտենք, Թէհրանի Հայ հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող „կուսակցութիւնները“ ոչ մի ինչ չեն, եթէ ոչ մի քանի հոգի, որոնք ամենայն ինչ կարող են անել, միայն թէ իրանց անունը հանրութեան մէջ գրաւեն, ինչպէս ասենք՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներում Ֆիլիպինեանները, Ֆրանսիայում Բոնապարտիստները, Գերմանիայում Սոցիալիստները, Ռուսիայում Նիհիլիստները եւ այլն:

տալ ապագայ սերունդը փչացնելու „խաթրի„ համար՝ ոչ թէ որովհետև Կիրակոսը այս ինչ ուսուցչին չի կամենում և Փիլիպպոսը կամենում է և այն նրա համար որ կրթութեան գործը շինելով մի շատ նուիրական գործ, հարկաւոր չէ նրան թոյլ տալ խաղալիք և գործիք լինելու—վայրենի կրքերով միմիանց դէմ զինուող—կլօռւնների և միմօսների։ Մի խօսքով կուսակցութիւնները չեն զբաղւում Կիրակոսի կամ Փիլիպպոսի անձնաւորութիւններով այլ այսինչ կամ այնինչ իրանց համար խիստ օգտակար նկատուած հասարակութեան ծառայող պրինցիպներով, գաղափարներով նրանց փոփոխելու կամ անշարժ թողնելու մասին։

Այդպէս են անում արդեօք Թէհրանի „կուսակցութիւն„ կոչուելու համարձակութիւն ունեցող այն խմբերը, որոնք միմիանց են բզկտում վայրենիների պէս, ուրանալով ամեն ճշմարտութիւն եթէ գալիս է հակառակորդ բանակից։

Այդ զանազան Փիլիպպոսներն ու Մարկոսներըզ կուրացած անձնական հաշիւներով, բացի այն որ բան ու գործ են արել միմիանց վերայ փողոցային բառերով յարձակուիլը, այլ և հասարակական հիմնարկութիւններն են ընտրել իրանց կրքերի ասպարէզ և ապականում են նրանց մաքուր ու կեղտոտ շնչովը։

Կուսակցութիւններ են դորանք թէ անձնական հաշիւներ միայն:

Այդ աւելի դիւրութեամբ վճռելու համար, հարկաւոր է մի ակնարկ ձգել նրանց գործունէութեան վերայ, որ և մենք կանենք յաջորդ անգամ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նամակ Դավրէժից

—

6 Նոյեմբերի 94

Վերջապէս խաւարամիտների դիմակը պատռեցաւ բանակը մեծամասնութիւն կազմելով Բերդաթաղի ուսումնարանում, վստահանալով իւր ունեցած ուժերին և պաշտպան նախագահին, պատերազմ հրատարակեց 6 հոգով երեք ազատամիտների դէմ, համոզուած լինելով, որ իրանց սկսած պատերազմով հրաժարացնել կը տան ազատամիտ ուսուցիչներին, և հոգաբարձուներն էլ կիմանան թէ որոնց հետ գործ ունին։ Բայց չար բախտը բոլորովին դէպի հակառակն առաջն բդեց եկեղեցու պաշտպաններին, բարոյականութիւն և համեստութիւն գոռացողներին.—Նոյեմբեր 1-ին Բերդաթաղի հոգաբարձութիւնը՝ խառը հոգաբարձական և ուսուցչական ժողով գումարելով, յայտնեց խաւարամիտ բանակին իւր վճիռը, թէ ով որ չի ուզում հպատակուիլ հոգաբարձութեան ստորագրած պայմանին տեսչի հետ, կարող է իրան ազատ համարել իրանց հովանաւորութեան տակ գտնուած ուսումնարաններում պաշտօնավարելուց։ Խաւարամիտ բանակը երբ այս խօսքերը լսում է, իւր պաշտպանի բերանից և ոչ ուրիշի, մի րոպէ կորցնում է իրան, յետոյ սեփական ուժերի վերայ վստահանալով երկար բարակ խօսելով՝ ուզում է համոզել հոգաբարձութեան որ պ. տեսչի իրանց հրամայելն է պատճառ դառել այդ բոլորի։ Բայց բանը նորանումն է, որ մինչև Նոյեմբեր 1-ի ժողովը, իրանց բանակից մէկը դաւաճանելով իւր ընկերներին, գնացել խոստովանուել է հոգաբարձութեան, թէ „տեսուչը շատ քաղաքավարի կերպով դիմեց մերոնց և խնդրեց, որ կիւրակի օրը աշակերտների հետ գնանք եկեղեցի, իսկ մերոնք, ընդհակառակը նորան իմ առջևս անպատուեցին մինչև անգամ“։ Նոյեմբ. 2-ին վեց հոգի միասին խաւարամիտները չեկան ուսումնարան, հոգաբարձութիւնը գրեց և հարցրեց նորանց չը գալու պատճառը, իսկ նորանք էլ վեց ստորագրութեամբ մի խնդրագիր ուղղելով հոգաբարձութեան յայտնել են, որ իրանք չեն գալու ուսումնարան մինչև իրանց բաւարարութիւն չը տրուի, նոյեմբ. 1-ի հոգաբարձութեան ժողովի խօսքերի պատճառով։

Հոգաբարձութիւնը նրանց պատասխանում է „մենք ձեզ չենք հրաժարացրել, բայց որովհետև դուք այսօր չէք եկած ուսումնարան, մենք ձեզ ազատ ենք համարում մեր հովանաւորութեան տակ գտնուած ուսումնարաններում պաշտօնավարելուց։ Խաւարամիտ բանակը հենց առաւօտը, դեռ լոյսը չը բացուած դիմում է պաշտպան նախագահին, որը մերժում է նրանց ընդունել, ապա դիմում է հոգաբարձուներից մէկին, որից նոյնպէս մերժւում է, անճարացած սկսել են մարդիկ մէջ գցել, բայց անօգուտ։ Հոգաբարձութիւնը արդէն հեռագրել է Թիփլիս ուսուցիչների համար և երեք ուսուցիչ արդէն վարձել է հենց Դավրէժում։ Իսկ Լիլաւայում այսօր բոլոր լիլավացիները հառաչելով ասում են, որ մեր ուսումնարանը բացարձակապէս ընկաւ—գուցէ և չըկանգնի։ Ուսումնարանների տեսչի և հոգաբարձութեան երկար ընդհարումներից յետոյ „Սէր„ ընկերութեան նախագահը կարողացաւ ձեռք բերել Լիլաւայի տղայոց ուսումնարանում վերակացուի պաշտօն և հիգ զանգակ խփելու համար (իրան առելով,) տանում է եօթանասուն թումանի։

Այսպէս ուրեմն, գիտութիւն գոռացող պ. նախագահը, որ հիմա վերակացու է Լիլաւայի տղայոց ուսումնարանում, առանց կարմրելու պիտի մաքսէ լուսաւորար և հացթուխ կանանց որդւոց բերանից կտրուած կոպէկները։

Տ.

ԹԷՀՐԱՆԻ ՕՐ. ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

(Օր. Թ. Վարդանեանի նամակի առիթով շար. 43Թւից.)

—

Ուրեմն, տղամարդու հենց իրան տե-

—Իսկ դուք ինչով կարող էք բացատրել:

—Ինչով պիտի բացատրեմ, նրանով, որ մեր մէջ դեռ եւս տիրապետում է հակառակութեան ոգին:

—Իսկ ես բոլորովին այլ կերպ եմ հասկանում, ասացի ես:

—Ինչպէս:

—Շատ պարզ:

—Օրինակով խօսեցէք:

—Ա՛յ քեզ. օրինակ, երբ մայրը սաստիկ սիրում է երեխային, ասում է. «ուտեմ քեզ, կծեմ քեզ, ուտեմ կարմիր Թշիկդ, կծեմ կարմիր Թուշիկդ:»

—Յետոյ:

—Էլ ինչ յետոյ, միթէ պարզ չի. անկասկած շատ սիրելուցն է, որ մեր ազգայիններն էլ իրար միս են կրծում:

—Բայց սխար մօր չափազանց սիրոյ առաջացած այդ արտայայտութիւնը խօսքով է իսկ մերոնցը գործով:

—Շատ պարզ է. այդ ցոյց է տալիս, որ մերոնցին դէպքում սէրը նրկնապատիկ, գուցէ եւ քառապատիկ է, որ չէ բաւականանում միայն խօսքով արտայայտուելով, այլ եւ պահանջում է գործ:

***

Բ. Հարց.—Ինչու մեր Թէհրանցիք ունին միայն 3 գրադարան եւ ոչ 13. չի կարելի այնպէս անել որ ունենան 13 գրադարան:

—Ինչու չէ:

—Ինչպէս:

—Շատ հեշտ. երեք գրադարաններից երկուսն ունին իւրաքանչիւրը ընթերցանութեան 30 գիրք, իսկ Ընթերցասիրաց ընկերութիւնն 330 գիրք. եթէ վերջինիս գրքերը բաժանենք 11 մասի եւ իւրաքանչիւր մասը կազմենք առանձին գրադարան, այն ժամանակ Թէհրանցիք կունենային 13 գրադարան, որոնք կունենան հաւասար թուով գրքեր: Եւ եթէ Թէհրանում հաշուելու լինենք մօտաւորապէս 130 տուն հայ այդպիսով իւրաքանչիւր 10 տան վերայ կընկնի 1 գրադարան:

—Եւ դու կարծում ես, որ այդչափ յառաջադիմութեամբ Թէհրանցիք կը բաւականանան:

—Հապա ինչպէս:

—Պէտք է այնպէս անել, որ իւրաքանչիւր տան բաժին ընկնի մի գրադարան:

Այդ էլ շատ հեշտ է. 3 գրադարաններն ունին ընթերցանութեան 390 գիրք. Թէհրանցիք են 130 տուն, եթէ իւրաքանչիւր տուն վերցնի 3 գիրք, այն ժամանակ Թէհրանցիք չեն ունենայ այլ եւս 13 գրադարան, այլ 130 գրադարան, այսինքն իւրաքանչիւր տան մի գրադարան—3 գրքով. եւ եթէ իւրաքանչիւր տան հաշուենք միջին թուով 3 հոգի, ամեն մէկին կընկնի 1 գիրք, որ շատ շատ է Թէհրանցիների համար:

***

Գ. Հարց.—Ինչու Թէհրանցիք չեն աշխատում հարստացնել իրանց գրադարանները նոր լոյս տեսած գրքերով, այլ բաւականանում են միայն հներով:

—Նախ որ Թէհրանցիք շատ հեռու են նորամոլութեան ախտից եւ հին ընտիր գրքերը թողած

սակէտով—լինի նա բռնաւորական տեսակէտ—իգական սեռի կրթութիւնը ներկայացնում է որպէս մի ամենակարեւոր գործ, որի վերայ հարկաւոր է կենդրոնացնել բոլոր ոյժերը: Այդ կրթութեան տեսակից է կախուած ապագայ սերնդի մտաւորական և նոյն իսկ ֆիզիքական ոյժի յատկութիւնը: Որպէս եւրոպացի խելօք գործարանատէրը (որ շատ աւելի վտանգաւոր է) իւր գործաւորներին լաւ խնամում է նրանցից մշտապէս իւր օգտին ծառայող ոյժ և ջանք ծնեցնելու համար, այդպէս էլ տղամարդը իւր սերունդը ընտիր դարձնելու մտածութիւնով պատրաստում է մեծ ուշադրութեամբ մայրերը պատրաստել:

Մեր այս խօսքերն էլ թէև բռնաւորական ձգտումներ են արտայայտում—որովհետև նրանք կնոջը որպէս արտադրող աւարկաներ են միայն նկատում,—որքան որ նրանց եզրակացութիւնը այն է լինում որ կինը դառնում է որպէս անասուն կամ բոյս, որին արուեստական ընտրողութեան (sélection artificielle) ենթարկելով կամենում են նրանից լաւ սերունդը ունենալ, այնուամենայնիւ այդպիսի ձգտումները կարող են կնոջ իրան և մեծ ծառայութիւն մատուցանել: Եթէ տղամարդը իւր օգտի համար նորա կրթութեան վերայ խնամք կը տանէ, կինը այդպիսով միջոց կը ստանայ վաղ թէ ուշ զգալու իւր ստոր դրութիւնը, տղամարդկանց՝ իրանց իրաւունքների բռնաբարելը և վաղ թէ ուշ, նա կը ձգտէ հասնել իրան արժանի բարձրութեանը և չը թողնել որ այլ ևս շարունակուի տղամարդու անարդար վարմունքը դէպի նա:

Հասարակական մի այնպիսի հարց է այս որի մէջ մտնելը մեզ շատ հեռուները կարող էր տանել, ուստի և մենք կը սահմանաւորենք մեր ասելիքը պարսկահայոց իգական սեռի կրթութեան վերայ: Առանց էն էլ բուն հարցից շեղուած ենք համարում մտնելով կանանց հարցի մէջ: Որ պարսկահայերը իրանց իգական սեռի կրթութեան վերայ նայում են որպէս մի „աւելորդ“ ծախսի վերայ, որ այդ կրթութիւնը նրանք սահմանափակում են միայն քիչ կարդալ—գրել քիչ էլ հաշուելու մէջ, դա փաստ է: Դեռ ոչ մի ուսումնարան, լինէր նա Դավրէժում, Թէհրանում կամ Սպահանում չէ կարողացել հասարակութեան տալ մի կրթուած մայր: Սովորեցնել կնոջը մի քիչ կարդալ, մի երկտող գրել և մի քանի զարդեր գործելը, դա երբէք կրթութիւն չէ համարւում, որպէս և այն որ շատ և շատ ծնողներ իրանց որդւոց ուսումնարան են ուղարկում նրանց՝ գլխներից „ռադ“ անելու համար: Ունենալ մի „կին վարժիչ“, որ մի քանի աննշան գործուածքների վերայ մի տարի զբաղեցնէր 20—30 աղջիկների և կամ մի կին, որ իւր ամբողջօրեայ ներկայութեամբ միջոց տար որ ուսուցիչները կարողանան դասեր տալ—դա ոչ մի լրջութեան կերպարանք չունի, դա, կրկնում ենք, փշրանքի է նմանում, որին արհամարհութեամբ և խղճալով աճում են իգական սեռի առաջ:

Այդպէս էլ է: Պարսկահայը կնոջ ուսման գործի վերայ չէ նայում որպէս կարեւոր գործի վերայ, այլ որպէս մօդայի վերայ, որին ինչպէս էլ որ լինէր, պէտք էր մի քիչ հրապարակ հանել: Թող լինի ուսումնարանը, թող ասեն որ նա բաց է, փոյթ չէ եթէ նա լիովին հակառակ ազդեցութիւն կունենայ, այսինքն կը սովորեցնէ աղջիկներին ժամանակ կորցնել, դատարկ բաներով զբաղուիլ և կամ մի քիչ կարդալ—գրել գիտենալով՝ ին քնիրան գիտուն համարել:

Ցանկալի էր, որ „Շաւղի“ թղթակիցները, Դավրէժից և Սպահանից խօսէին մեզ մի քիչ այդ քաղաքներում „հրապարակ հանուած“ իգական սեռի կրթութեան գործի մասին. ինչ վերաբերում է Թէհրանին, բացի կաթոլիկների և բողոքականների միսիոնական և բեթայնող կրթութիւնից, ոչ մի տեղ հայ աղջիկը չէ կարողանում ուսանելու գնալ: Ազգ. օրիորդաց դպրոցը փակ է, որովհետև վարժուհի չունի և որովհետև հոգաբարձութիւնը կամենում է „էժան գնով“ վարժուհիներ ունենալ և եղած վարժապետներով „եօլա“ տանել: Այդ մահաշունչ „եօլա տանելը“ կ... կան հիմնարկութիւնների ... է եղել, գրաւել և տիրապետո... րանում. ամեն ինչ „եօլա տա... րէնրի հիման վերայ է դարբնւ...

Ուզում են այժմ էլ „եօլա տա... րիօրդաց դպրոցը: Հենց խնդիրը նումն է և մեր բոլոր ասելիքը ..., որ եթէ օր. Թ. Վարդանեանի նամակը շարժել է շատերի սիրտը և եթէ հոգաբարձութիւնն ու մի քանի հատ “խօսքով փլաւ եփող“ պարոններ կամենում են (դեռ միայն „կամենում են“) փակուած դպրոցը բանալ, նրան բանալու են „եօլա տանելու„ օրէնքով ղեկավարելու համար միայն:

Այդ մի և նոյնն է թէ բանալ մի տպիկարանոց և բերել հայ աղջիկներին այնտեղ կորցնել տալու համար ժամանակ և ճաշակ:

Եթէ դպրոց են ուզում բանալ, պիտի այդ գործին վերաբերուին լրջութեամբ. „եօլա տանելը“ եթէ գուցէ կարելի լինի ուրիշ գործերում, բայց մանաւանդ կրթականում, նա մահացուցիչ ազդեցութիւն է թողնում:

Հենց այդ նկատումով, որ օրիորդաց փակ դպրոցը պիտի բացուի „եօլա տանելու“ ձևի համար, մենք մեր կողմից օր. Թ. Վարդանեանի առաջարկութիւններին պատասխանում ենք, որ.

1) Եթէ դպրոցը պիտի բացուի, բացանողները նախ պիտի ըմբռնեն, որ բացանելիք հիմնարկութիւնը ոչ թէ մի խանութ է կամ մի պատկերահանդէս, այլ մի նուիրական գործ: որին պիտի „կօշիկներն հանել և այնպէս մօտենալ,“ և որի մասին չի կարելի մտածել այնպէս, որպէս պատուղ են ուտում „ժամանակ անցկացնելու“ համար:

2) Որ եթէ ուզում են բանալ, հարկաւոր է նորա համար ոչ թէ մի կին—ինչ որ էլ լինէր նա, տգէտ կամ անտաշ—այլ մի կանոնաւոր վարժուհի, ոչ թէ մի կին, որ դպրոցի մէջ մնալով հնարաւորութիւն տար ուսուցիչներին այնտեղ մտնելու (քանի որ հարեմական տգեղութիւնները դեռ մնում են), ոչ թէ այդ

ժամանակածառ չին ուզում լինել գրականական նորութիւնների յետևից ընկնելով:

—Եւ երկրորդ:

—Եւ երկրորդ, որ թէհրանցիք լաւ են ըմբռնել խելացի ընթերցանութեան պահանջը—ոչ թէ աշխատել նորանոր գրքեր կարդալ. այլ միշտ հին կարդացածները կրկնելով ամրապնդել նոցանից ստացած բարոյական տպաւորութիւնը:

—Եւ երրորդ:

—Եւ երրորդ, ինչպէս ցոյց են տալիս ստատիստիկական հաշիւները՝ միջին թուով ամեն մի թէհրանցի ազգային կարդում է տարեկան 1/100 գիրք, այդ հաշուին նայելով եղած գրքերը կը բաւականան դեռ եւս հազարաւոր տարիներ, էլ ինչ հարց կայ նոր գրքեր բերել տալու:

—Բայց եթէ պատահի, որ մի բարեսիրտ ազգային ազգասիրութիւնից դրդուած նուիրէ գր ադարանին նոր գրքեր, ինչպէս պէտք է վարուել այդ դէպքում,

—Շնորհակալութեամբ պէտք է ընդունել:

—Բայց չէ որ ասացիք, թէ հարկ չը կայ նոր գրքերի:

—Ճշմարիտ է, բայց ընդունելուց յետոյ...

—Ընդունելուց յետոյ ինչ...

—Պէտք է վաճառել եւ փող դարձնել:

—Ուրեմն աւելի լաւ չէր լինի յայտարարութիւն տալ, որ նուիրատուները ոչ թէ գիրքն ուղարկէին, այլ գրքի արժէքը:

—Այդ անկարելի է:

—Ինչու:

—Որովհետեւ նուիրատուները աւելորդ գրքեր միշտ կարող են ունենալ, բայց փող—ոչ երբէք:

—Ինչպէս, բացատրեցէք օրինակով:

—Ա՛յ ինչպէս—դիցուք բերում են ձեզ մօտ մի որ եւ է նոր գրքի բաժանորդագրութեան թերթ, դուք էլ ստիպուած ստորագրում էք. գիրքը ստանալուց յետոյ ինչ պիտի անէք, դէն ձգել—դա մեծ վիհանձնութիւն կը լինէր ձայի կողմից, գրում էք խոշոր տառերով նուէր եւ ուղարկում մի որ եւ է դրադարանի:

Գրքին տուած փողը հօ յետ չէք կարող ստանալ, գոնէ դրանով ազգասէր էլ է կը դառնաք:

—Մեծ վտանգ է սպառնում մեր թարգմանիչներին ասում է ինձ թերթիս գլխաւոր աշխատակիցներից մէկը երբ պատահում եմ նրան մօտ օրերումս:

—Որտեղից էք գուշակում այդ:

—Նոր Ջուղայից ստացուած մի թղթակցութիւնից:

—Չի կարելի կարդալ այդ բոթաբեր նամակը:

—Ինչու չէ, ահա կարդացէք այս տողերը:

Ես առնում եմ նամակը եւ կարդում եմ այս տողերը: «Արդէն շատոնց յայտնի է որ մեր դպրոցներում ներկայ գործածուող կանոնաւոր դասագրքերի մեծամասնութիւնը թարգմանութիւններ է զանազան ազգերի դասագրքերից. կարծեմ աշակերտք առաւել լաւ կը սովորեն եթէ նոյնը բնագրով դաս աւանդուին քան թէ թարգմանած դասագրքերով»....:

—Եթէ նոյն իսկ այդ բնագիրը չինարէն եւս լինի, հայցնում եմ ես համբերութիւնս կտրած:

—Այդպէս պէտք է հասկանալ:

—Շատ գեղեցիկ, ես եւս գերադասելի եմ համարում բնագիրը թարգմանութիւնից. բայց շատ կուզէի իմանալ, ինչու Նոր-Ջուղայի պ. թղթակիցը ինքը չէ շնորհ բերել Թէհրան «Շաւիղի» խմբագրութիւնը, այլ իւր նամակն է ուղարկել. չէ որ ինքը աւելի գերադասելի է իւր նամակից:

Նիշ.

պաշտօնի համար և մի և նոյն ժամանակ էլ ձեռագործի դասը» եօլա տանելու» համար, այլ մէկը որ սովորեցընէր և արդիւնք ցոյց տար:

Այլապէս այդ դպրոցը բանալը նոյնքան վնասակար է, որքան որ չէ նրա փակուած մնալը, որքան որ չենք կաթոլիկներինը և բողոքականներինը, ոչ թէ որովհետև նրանք այլադաւան դպրոցներ են, այլ որովհետև այնտեղ տիրում է սխոլաստիկական և միստիկական մանկավարժութիւն, որը վաղուց վռնտուած է եւրոպական դպրոցներից՝ ծառայում է միմիայն կրօնական միտումների:

Յօդուածս չատ երկարեց: Հարցը դեռ հրապարակի վերայ է, նա դեռ չէ լուծուած և անշուշտ առիթ կը տայ մեզ՝ մի ուրիշ անգամ ևս վերադառնալ դէպի նա:

**

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մօտ օրերս Թէհրան է սպասւում Ն. Կ. Մեծութիւն Մօզաֆար-էդ-Դին Միրզա, Թագաժառանգ Իշխանը, որը արդէն Դավրէժից ճանապարհ է ընկել:

—

Դավրէժից մեզ գրում են հետևեալը: Մօտ 4 ամիս է, որ եկել է Դավրէժ փալտակարանցի մի տիրացու և մտադիր է ձեռնադրուիլ Քէլվանի համար: Այս օրերս մենք անձամբ տեսանք, թէ ինչպէս մի թուրք նպարավաճառի համար գրքի էր նայում:

—

Նոյն տեղից մեզ գրում են, որ Դավրէժի ազգային տպարանը, որ մինչև հիմա ծառայում էր տպարանի գրաշարի օգտին, վերջապէս ազատուեցաւ գրաշարի ձեռքից: Տպարանական գործը Բերդաթաղի հոգաբարձութիւնը յանձնել է իւր պաշտօնակիցներից պ. Ջիբրայէլ Բուդաղեանցին, որին և տրուած է կատարեալ լիազօրութիւն, տպարանի բոլոր գործերի վերաբերութեամբ և անուանել նրան տնօրէն: Պ. Բուդաղեանցը բնիկ տպմասեցի է և շատ համակրութիւն է վայելում:

—

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ Դավրէժի Լիլաւայ թաղի ուսուցչական նեղկայ խումբը մտադիր է վերաբանալ Լիլաւայ թաղի կիրակնօրեայ դպրոցը, որ փակուեցաւ անցեալ տարի, զոհ զնալով ուսում և գիտութիւն դռռացող մի քանի պարոնների քմահաճութիւններին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ:

—

Այս շաբաթուայ Կովկասից մեզ հասած հայ թերթերը բաւական հետաքրքիր նիւթեր են բովանդակում: Այն հարցը որ աւելի շատ տեղ է՝ գրաւում, Շուշուայ թեմական դպրոցի դէպքն է: Այդ դէպքից արտափայլում է մի աչքի խփող բռնաբարութիւն որ ի գործ է դնում հայ կղերը ժողովրդի իրաւունքների վերաբերութեամբ: Սմբողջ պատմութիւնը այս է: Դպրոցի տեսչի—պ. Լեւոն Սարգսեանցի եւ ուսուցիչների դէմ լարուած են լինում Շուշուայ տիրապետողները՝ առաջնորդն ու իրան նման կրօնաւորութիւնը: Տեսուչը, համամայնութեամբ ընտրեալ կանոնաւոր խորհրդի եւ հոգաբարձութեան՝ դպրոցից արտաքսում է 7 աշակերտների: Առաջնորդը պահանջում է որ ներս ընդունեն նրանց. խնդիրը հասնում է Կաթուղիկոսին. Սա էլ հեռագրով անդում է որ աշակերտները ներս ընդունուին եւ ահա տեսուչը, ուսուցչական մարմինն ու հոգաբարձութիւնը (ի բաց առեալ մէկից, որը ով գիտէ որպիսի ազդի մէկն է) տալիս են հրաժարական: Նրանց բնեռացքը խիստ բնական էր, կամ պէտք էր ամբողջ խումբը դուրս գնար ուսումնարանից եւ կամ աշակերտները ներս չը մտնէին եւ որովհետև Կաթուղիկոսը սիրում է ըստ իւր վաղեմի սովորութեան եւ նախախնամութեան դեր կատարելու յաւակնութեամբ խառնշտորել ամեն գործ, խելքը գլուխ մարդկանց էլ լաւ էր տեղի տալ խաւարի այդ առժամանակեայ տիրապետութեան առաջ:

Պ. Լեւոն Սարգսեանը եւ ուսուցչական խումբը ամբաստանուում էին որպէս «անկրօնութիւն» տարածողներ: Դա զարմանալի էլ չէ. Երբ է արդեօք հայ կղերը այնքան ազատամիտ եղել կարողանալու համար անխռով տանել դիտութեան ճշմարտութիւնները: Կղերականութիւնը միշտ կամեցել է իւր յատուկ դիտութիւնն ունենալ եւ իւր մուրջի տակ կռել—կոփել ճշմարտութիւնները, նրանցով իւր տիրապետութիւնը միշտ կանգուն պահել կարողանալու համար: Սա մի ճշմարտութիւն է որ արդէն տարրական է եղել իւր ակներեւութեամբ:

Այժմ կարդում ենք որ Կաթուղիկոսը յայտնի խաւարամիտ Նահապետ աթեղային ուղարկել է որպէս տեսուչ եւ սա այժմ Թիֆլիս է գնացել Շուշուայ դպրոցին ուսուցիչներ դտնելու համար: «Նոր-Դարը»—խաւարի պաշտպան այդ թերթը այդ մասին „ուրախութեամբ“ հաղորդում է որ՝

«Ինչպէս լսում ենք, հայերէն լեզուին քաջ հմուտ (!!) պ. Պլուզն էլ հրաւիրուած է Շուշի՝ ուսուցչութեան պաշտօնով»:

Ինչպէս կը նշուում է, Նահապետ աթեղան ուզում է վերածնեցնել Մեղուական փոշիապատ անծերի տիրապետութեան դարը: Այդ «քաջ հայագէտ» Պլուզը, վանեցի յայտնի արխիւային Մաղաքիա Պլուզն է, որի «քաջ հայագիտութեան» տիպ սրներից կարելի է կարդալ «Մեղուի» հին համարների մէջ: Ժամանակ է մի անկկանոց պատրաստել. չը լինի թէ Նահապետ աթեղան Շուշուայ դպրոցն է կամենում այդպիսի մի հիմնարկութեան փոխել:

—„Մշակի“ №125ի—բանասիրականում կարդում ենք «Դրական երեւոյթներից» վերնագրով մի ուշադրութեան արժանի յօդուածի սրբագրեանի մի յօդուածի մասին, որ տպուել է «Արմ. գանձում» եւ որով նա իրանից բացի բոլորին «անհաւատ» է անուանում եւ կամենում է տարաձիգների Աղոնկ միմիայն ընտրութեան իրաւունքը: Աչքներդ լոյս, ով դուք սուտ—քրիստոսներ ու վանքի հաւերն ուտող կեղծ ճգնաւորներ, ոտրի ելէք բոլոր պապասոնց աւազակներ եւ եկեղեցիների պատերը համբուրող հարստահարիչներ, ձեզ ծնել է մի պրոֆէսէօր պաշտպան:

(Կը շարունակուի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լոնդոն, 10 նոյեմբ. „Սթանդարդ“ լրագիրը այն կարծիքին է թէ յոյս չը կայ որ մեծ պետութիւնները չինական կառավարութեան խնդրանաց գործադրութեանը. և նորա և Ժապոնիայի միջև խաղաղութիւն հաստատելու խնդրոյն համերաշխաբար դրծելու ձեռնարկեն: Ֆրանսական և ռուսական կառավարութիւնները ցանկութիւն ունին միջամտելու սակայն Գերմանիան ապարդիւն է համարում այդ միջամտութիւնը: Լորդ Բոզբերին արտաքին քաղաքականութեան վերայ ատենաբանելով, ասաց: Նայելով այն պատերազմին որ այժմ կայ Ծաղրագոյն Արեւելքում, աշխարհի ոչ մէկ տեղի համար խաղաղութիւն չը կայ: Բայց Անգլիան պատրաստ է օգնելու այն ամեն ձեռնարկութիւններին որ մեծ պետութիւնները կանեն, այդ արեւելեան աշխարհում ապահովութիւն և խաղաղութիւն հաստատելու համար: Անգլիան Ռուսիայի հետ միաբան է եղել, և այն քաղաքական յարաբերութիւնները որ այժմ կան այս երկու պետութիւնների մէջ, երբէք այսօրուայ նման լաւ պրմանների մէջ չեն եղել. և այն բանակցութիւններն որ Ասիայում այս երկու պետութիւնների սպառնացեալ սահմանների մասին սկսուել են շուտով կը վերջանան և այն վտանգը որ այս խնդրում մեծն Բրիտանիայի և Ռուսիայի մէջ հաւանական էր, բոլորովին կը բարձուի: Եւ եթէ Ռուսիան և Անգլիան Ասիայում կը միաբանեն, իրաւի մեծ ձեռնարկութիւն կը լինէր ամբողջ աշխարհում խաղաղութիւն և անդորրութիւն հաստատելու համար: Նախարարապետը այս խնդիրների մասին խօսելուց յետոյ, ռուսաց կայսր մահուան համար ցաւակցական խօսքը արտասանեց: Դորանից յետոյ մէջ բերելով Անգլիայի և Ֆրանսիայի ներկայ յարաբերութիւնները և յիշելով Ղրիմի պատերազմի ժամանակ այս երկու տէրութեանց դաշնակցութիւնը, ասաց, ես ցանկանում եմ որ Անգլիայի և Ֆրանսիայի տէրութիւններն ոչ թէ միայն պատերազմի ժամանակ դաշնակցէին այլ և խաղաղութեան ժամանակ: Յետոյ Նախարարապետը ասաց որ ի վաստ ապահովութեան երեք վտանգներ կան, մէկը որ եւրոպական տէրութիւնները շարունակ զինու զօրութեան աւելացման են դիմում, երկրորդ որ եւրոպական լրագիրները, առաւելապէս, առանց նկատումի խնդիրներ են հրատարակում և երրորդ մի քանի տէրութեանց զանազան կողմերում յետախուզութիւնն ու լրտեսութիւնն է որ խռսակցութեան, անհամաձայնութեան և կռուի պատճառ են լինում: Նախարարապետը ասաց որ վերջին խնդիրը, խաղաղութեան ճշմարիտ վտանգների շարժառիթն է և մինչև որ պետութիւնները Աֆրիկայում իրանց ոտնձգութեան աստիճանը չը չափաւորեն, այդ ճշմարիտ վտանգները մէջ տեղից չեն կարող բարձուի:

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ